

դտնուէին, որոնք իրենց կողմից էլ կարող էին որոշ դրամական օգնութիւն հասցնել:

Այդ տեսակ պարտադիր սնունդի մատակարարումն աշակերտներին մեր դպրոցներում միանգամայն անհրաժեշտ, հերթական հարց պէտք է դարձնել: Աւելորդ ենք համարում մանրամասնութիւնների մէջ մտնել նրա նշանակութիւնը բացատրելու, քանի որ ամենատարրական հասկացողութեան տէր մարդուն էլ դա պարզ է, ինչպէս լոյս: Բայց հերթական հարց դարձնելով դպրոցական պարտադիր սնունդի մատակարարումը, մենք բնաւ ելակէտ չպէտք է ունենանք բարեգործական գաղափարը, ազգատախնամութեան միտքը. այլ պիտի դատենք զուտ սոցիալ-առողջապահական տեսակէտով, հասարակական այժմերի կանոնաւոր դարգացման պայմանների անհրաժեշտութեամբ. պիտի կանգնած լինինք այն հայեցակէտի վրայ, որ մարդկային ու հասարակական մտաւոր-բարոյական-հոգեկան զորդացումն ամբողջապէս հիմնուած է նրա նիւթական տարրերի վրայ: Ահա թէ ինչո՞ւ անհրաժեշտ է, որ մեր հասարակութեան մէջ էլ հնչէ այն գիտակցական պահանջը, որ արդէն վաղուց լսուում է կուլտուրական երկրներում՝ «նախ հաց, ապա ուսում»:

Խ. Ս.

Կ. Պ. ՊՐԵՏԵՐՆՈՍՅԵՎ

Թարգմանօրէն տպագրութեան ենք տալիս «Бессараб. ЖИЗНЬ» թերթի համարներից մէկում գետեղած սոյն յօդուածը, որի աւթիւ խմբագրութիւնը իւր կողմից հետեւեալ նկատողութիւնն է անում.

Ընդօրինակում ենք «Русский Архивъ»-ից Կ. Պ. Պրեդանոսցեվի Ե. Կ. Տիւտչեային գրած մի շարք հետաքրքիր նամակները:

Պէտք է յիշել, ի հարկ է, որ սոյն նամակների հեղինակը հաղորդում է իրողութիւնները և բնորոշում անձնական սահմանափակ հայեցակէտով, սակայն և այնպէս, այս նիւթը դորանով չի դադարում բարձր արժէք ունենալուց այն մարդկանց համար, որոնք հետաքրքրուում են Աղէքսանդր III-ի թագաւորութեան սկզբի պատմութեամբը:

3 Մարտի, 1881 ամի:

Աստուած իմ, ռրբան ցաւում եմ նոր թագաւորի համար: Յաւում եմ ինչպէս մի խեղճ, հիւանդ, շուարած երեխայի համար: Վախենամ կամաղուրկ լինի: Այն ժամանակ ո՞վ պէտք է առաջնորդէ նորան. մի՞թէ դարձեալ նոյն աչքակապ Լօրիս-Մելիքովը: Բոլոր նշաններին նայած, այժմ նա նորան կաշկանդում է, որովհետեւ նորա ձեռքին են բանալիները և նա է ապահովութեան պահապանը:

Առաջին երեկոյեան Ա. Ա. գրկեց ինձ արտասուքն աչքերին և ասաց. «Ես աներկբայ եմ, որ դուք նոյն հաւատով ու ճշմարտութեամբ կժառայէք, ինչպէս առաջ»:

Ես նորանից այլ խօսք չէի սպասում. սակայն իրեն համար ես ուրիշ խօսք կցանկայի լսել, կենդանի խօսք. «Ինչպէս պիտի լինեմ, ի՞նչ պիտի սկսեմ»:

Դորանից յետոյ ես չտեսայ նորան, բայց նամակներ գրեցի: Երէկ ստորին մարդկանցից մէկը եկաւ ինձ մօտ աքտասուքն աչքերին. «Ի սէր Աստուծոյ, ասացէք կայսեր, ամենից առաջ այստեղից պէտք է արսորել Կոստանդինին և Իւրեակայա իշխանս հուն»:

Այսօր ես գրեցի նորան, անհրաժեշտ է, որ նա իւր սեպհական, հաստատուն կամքը յայտնէ:

Նա պատասխանում է ինձ պարզ խօսքով, որի մէջ նորա բարի և պարզ հոգին է երևում:

«Ի սրտէ շնորհակալ եմ Ձեր մտերմակրան նամակի համար: Աղօթում եմ և յոյսս միայն Աստուծոյ վերայ

եմ գրել: Նա չի թողնիլ մեզ և մեր թանկագին Ռուսաստանին:

Բայց կամքի հետք չկայ:

Կոստանդինը դուրս գալու ժամանակ միշտ խորհրդաւոր դէմք է ունենում: Անհաճոյ է նորան նայելը:

Հանգուցեալ կայսեր ժամանակ ինչ որ խորհրդակցական ժողովի արդէն երեք նիստ տեղի էր ունեցել, մէկը ձմեռնային, միւսները Անիշկովսկի պալատում: Եւ չէի մասնակցում: Թագաժառանգը չէր հակաճառել, սակայն ասել էր Լօրիս-Մելիքովին, որ արձանագրութիւնը ինձ ցոյց տայ: Լօրիս-Մելիքովը յայտնեց ինձ այդ մասին սորանից երկու շաբաթ առաջ և իմ ներկայութեամբ ստացաւ արձանագրութիւնը, ուզում էր նոյն օրն ուղարկել և մինչև այսօր չէ ուղարկել:

Աւելի քան հաւատալի է որ նոյն շաւղով կերթան: Ոչ ոք կռուի մէջ մտնել չէ ուզում, իշխանութիւնը քայքայուել է: Բսլոնն էլ ոչ թէ տղամարդիկ են, այլ սրտով սառը ներքինիներ:

Կպահանջեն, ինչպէս այսօր լրագրները պահանջում են, «անձի ապահովութեան և իշխանութեան անպատասխանատուութեան համար պէտք է շանթարդել շինել: Յատկապէս բարոյապէս թուլացած իշխանութեան համար: Այս դժոխային խօսքը գայթակղեցուցիչ է: Պէտք է խելօք և ոյժի տէր մարդ լինի, նորան չլսելու համար:

5 Մարտի, 1881 ամի:

Օ՜, ինչ անիծած քաղաք է, որտեղ ես ապրում եմ և ինչպիսի անդունդ կայ նորա և Ռուսաստանի մէջ, որի բախտի ղեկավարն է նա:

Ինչ որ ճակատագրական, գաղտնի մի բան կայ մարդկային մտքի և հոգու այս կուրուլթեան մէջ: Հարկաւոր է ականջ դնել խօսակցութիւններին, թէ «ինչ պէտք է անենք մենք», և իսկոյն պատասխան կտանաք. «անդունդ կայ քո մէջ (?)»:

Երէկ հոգեհանգստից յետոյ մօտեցաւ ինձ դէսաւոր հօֆմարշալ Գրօտը և յիմար բաներ խօսեց։ Նա բոլորովին արգեցած էր և կամ չատ ուրախ։ Սակայն վաղուց են խօսում, որ նա խելագարուել է։

6 Մարտի երեկոյեան։

Այսօր ես հսկում էի դագաղի վերայ գիշերուայ ժամի 12-ից մինչև 2-ը։ Խորհրդաւոր կերպարանք, հոգիս ճնշուում էր, սակայն խաղաղութիւն չկար՝ երկրպագում էր թիկնապահ գունդը։

Յետոյ հսկեցի միւս օրը ճաշին մինչև ժամի 2-ը, կայսերական հոգեհանգստի ժամանակ։ Վերջացաւ, պատարաստուեցին բոլորը և գնացին։ Այդ ժամանակ, մօտակայ սենեակից ներս մտաւ այրին՝ որ հազիւ ոտքերի վերայ կանգնում էր, — իւր քրոջ հետ։ Րիլիեմը էր նորան ուղեկցում։ Այրին ընկաւ դագաղի առաջ։ Հանգուցեալի երեսը ծածկուած է սպիտակ մետաքսէ գործուածքով, որը երբէք չեն վերցնում։ Սակայն այրին մօտենալով արագութեամբ յետ քաշեց ծածկոցը և անդադար համբուրում էր հանգուցեալի ճակատն ու երեսը։ Ապա տատանուելով, դուրս գնաց։ Խղճում եմ թշուառ կնոջը։ Այժմ իսկապէս նա խղճալի է և միայնակ։ Եկեղեցուց ես գնացի Սերգէի և Պաւլի մօտ, որոնք նոր էին եկել . . .

Նորանք ուրախացան ինձ տեսնելով։ Սերգէյը տաք կերպով հաղորդում էր ինձ իւր սարսափը այն բոլորի մասին ինչ որ անում էր և դէպի ուր վերջին ժամանակ տանում էր Լօրիս-Մելիքովը (Մարտի 5-ին ենթադրուում էր ներկայացուցչութեան համար ուկաղ տալ) և իրենց երկիւղն էին յայտնում։ Թէ ինչ կլինի և ինչ կվճռի կայսրը։ Եկաւ ծերունի գրաֆ Ս. Գ. Ստօգանովը։ Նա յուզուած էր։ Եկել էր ինձանից իմանալու, ինչ է կատարուում, ինչ են վճռել, և զարմացաւ, լսելով որ ես ոչնչից տեղեկութիւն չունիմ։

Բայց այսօր ինձ անհամբերութիւնն յազմեց և ես կայսեր մի երկար նամակ գրեցի:

Իմ ծրագիրս է, ի միջի այլոց, Պետերբուրգում զինուորական գրութիւն հրատարակել, փոխել մարդկանց և ապա թողնել Պետերբուրգը, այս անիծեալ վայրը, մինչև որ կմաքրուի, հեռանալ Մոսկուա:

Եթէ չէ կարելի, ապա աւելի հեռու: Խիղճս լռել չէ կարողանում:

11 Մարտի, 1881 ամի:

Անցեալ կիւրակի, ամսոյս 8-ին, ամենաառ օրն էր, որ յիշողութիւնիցս երբէք չի ջնջուիր:

Չեմ յիշում գրեւեմ արդեօք Ձեզ Լօրիս-Մելիքովի և կոմպանիայի ամբողջ Ռուսաստանին բարերարութիւն անելը հասարակապետութեամբ, և կամ սորա սկզբնաւորութեամբ՝ ամբողջ Ռուսաստանից ներկայացուցիչներ հրաւիրելով: Նորա խորհրդատուներն էին ուսուցչապետներ և մամուլին մասնակցողներ:

Նա ինձ ոչինչ չէր հարցնում, որովհետեւ առաջուց գիտէր իմ կարծիքս: Ժողովներ էին եղել, մէկը կայսեր և երկուսը թագաժառանգի մօտ: Այս անգամ բոլորը (!) համաձայնուեցին, որ սա մի անմեղ գործ է և բարեգործութիւն, որին ամբողջ Ռուսաստանն սպասում է:

Դեռ ևս փետրուարի 17-ին թագաժառանգը պատուիրած է եղել նորան, որ ծրագրի մասին ինձ յայտնէ և Լօրիս-Մելիքովը ասաց ինձ այդ մասին, բայց չուզարկեց ծրագիրը: Ամեն բան պատրաստուած էր: Մարտի 2-ին կայսեր մօտ նախարարական խորհուրդ էր նշանակած վերջնականապէս վճռելու համար այդ հարցը, մինչդեռ Լօրիս-Մելիքովը պատրաստել էր այդ մասին հանդիսաւոր յայտարարութիւն, որը պէտք է ամսոյս 5-ին «Правительствующий Вѣстникъ»-ում տպուէր:

Եւ յանկարծ այս զարհուրելի դէպքը . . . :

Թուում էր թէ, պէտք էր սարսափից քարանալ և

մոռանալ բոլոր ցնորքները և մտածել միայն մի բանի համար՝ վերահաստատել կարգապահութիւնը:

Սակայն, ինչպէս հաւատալ, երբ հէնց այստեղ այդ պարօնները ձեռնարկել էին մինչև վերջը տանել իրենց անմիա գործը: Մարտի 2-ից, կառաստորօրէի պատճառով լրագրիչներն սկսեցին պահանջել հասարակապետութիւն: Լօրիս-Մելիքովը ուղարկեց նորանց մօտ խնդրելու, որ միայն 15 օր լռեն:

Եւ ահա հրաւիրեցին մեզ կայսեր մօտ կիւրակէ օրը ժողովի, ճաշից յետոյ ժամի 2-ին: Հրաւիրեցին ինձ, ծերունի Ստրօգանովին և մեծ իշխաններին:

Կայսրը յայտնեց գործի էութեան մասին, աւելացնելով, որ հանգուցեալի կողմից այդ դեռ ևս վճռուած չէր, որ այդ գործը կասկածելի է, և խնդրեց, որ առանց քաշուելու խօսենք:

Լօրիս-Մելիքովը սկսեց կարգալ յայտարարութեան արձանագրութիւնը և ծրագիրը, որը պատրաստուած էր արդէն նոր կայսեր անունից, որպէս թէ իւր սուրբ պարտքն է համարում: Հօր ուխտը կատարելը:

Եւ երեակայեցէք, նորա այնքան անամօթ էին գըտնուել, որ այն յայտարարութեան մէջ թողել էին նոյն պատճառաբանութիւնները, ինչ որ առաջ, — որ ամեն տեղ խաղաղութիւնը վերականգնուած է, խռովութիւնները դադարեցրուած են, արքայութեանը վերադարձել են ևն, ևն:

Ժամանակ չկայ ամեն բան մանրամասնօրէն գրելու: Առաջինը Ստրօգանովը խօսեց դորա գէմ, կարճ, բայց եռանդով: Յետոյ Վալուէը: Արագա, Մելիլաթինը խօսեցին, փրուած, զգուելի ճառեր, որ ամբողջ Ռուսաստանը սպասում է այդ բարեգործութեանը:

Մելիլաթինը միեւնոյն ժամանակ սխալուեց, անուանելով ժողովուրդին անկիրթ մասսա: Վալուէը «ժողովուրդ» խօսքի տեղ գործ դրեց «ժողովուրդներ»:

Յետոյ խօսեցին Նաբակով, Սաբաբով ևն: Դոցա հակառակ խօսեցին միայն Պօսիեր և Մակով: Իսկ երբ դարձաւ ինձ, ես չկարողացայ սանձել վրդովմունքս և ատե-

լուծիւնս:

Բացատրելով սահմանադրութեան ամբողջ կեղծութիւնը, ես ասացի, որ մարդու երես ամօթից կարմրում է, երբ մտածում ես, թէ ի՞նչ լուրջներում ենք այդ մասին մտածում,—երբ դեռ ևս չէ թաղուած մեր կայսեր դին: Իսկ ո՞վ է այդ բանի մէջ մեղաւոր: Նորա արիւնը մեր և մեր որդւոյ վերայ է ընկնում: Մենք բոլորս նորա մահուան մէջ մեղաւոր ենք: Ի՞նչ էինք անում մինչև այժմ և նորա թագաւորութեան ժամանակ: Մենք միայն խօսում էինք, լսում էինք մեզ և միմեանց և նորա ձեռնարկութիւններից իւրաքանչիւրը մեր ձեռքի տակ ստութեան էր փոխուում, և նորա շնորհած բարձր ազատութիւնը կեղծիք էր դառնում: Վերջին տարիները, պայթումներն և միմաների տարիներում, ի՞նչ արինք մենք նորան պաշտպանելու համար: Մենք խօսում էինք միայն: Մեր բոլորի զգացմունքը պիտի միանային այն երկիւղից, որ նորան չսպանեն, իսկ մենք մեր հոգին լցրել էինք այնպիսի ստոր, անարգ երկիւղով, որ սկսեցինք երկիւղ կրել հասարակական կարծիքից, այսինքն ատելի դարձած լրագրերի կարծիքից: Ի՞նչ կասէ Եւրոպան, սակայն նորան էլ ճանաչեցինք միայն լրագրերի միջոցով:

Կարող էք երևակայել, թէ ի՞նչպիսի որոտմունքով էին խօսքերս դուրս գալիս բերանիցս: Հարեալներիս՝ Աբաղա և Լ. Մելիքով հաղիւ էին իրենց կատաղութիւնը պահում: Աբաղան պատասխանեց շատ խիստ (և անմիտ), այն բոլորից—ասաց նա—ինչ որ Սինօգի օբեր—պրօկուրօրն ասաց, հետեւում է, որ նախկին թագաւորի օրով կատարուած ամեն բան անպէտք է—և դիւղացիների ազատութիւնը, ևն. և մեզ նորանից յետոյ մնում է արձակուրդ խնդրել:

Կայսրը (որը, երբ ես ասացի՝ «նորա արիւնը մեզ վերայ է ընկնում»—ընդհատեց ինձ ասելով, «այդ ուղիղ է») պաշտպանեց ինձ ասելով, որ իսկապէս բոլորը մեղաւոր են և դորա մէջ ինքն ևս մասն ունի: Դարձեալ խօսեցին, եւ մեծ իշխաններն էլ խօսեցին:

թոյլ և անկենդան ճառեր, որ պէտք է մի բան անել, որ այդ անհրաժեշտ է։

Կայսրը ասաց, որ այդ գործը շատ կարևոր և բարդ գործ է, ուստի և դժուար այսօր վճռելու համար. պէտք է առանձին յանձնաժողովում քննել և ապա նախարարների կօմիտեում, միայն այն պայմանով, որ քաղաքական բնաւորութիւն չունենայ։

Ես շտապեցի հեռանալ հէնց որ վերջացաւ. Լսուում է, որ յանձնաժողով պիտի լինի մեծ իշխան Վլադիմիրի նախագահութեամբ։

Դորանից յետոյ չեմ տեսել կայսեր և ոչինչ չգիտեմ։ Ժողովից յետոյ նոյն առաւօտը կայսրն ընդունեց Բարանովին և նշանակեց նորան Պետերբուրգի քաղաքապետ։

Բարանովը այս տեսակցութիւնից հիացած է. նա այժմ գիշեր ցերեկ աշխատանքի մէջ։

15 Մարտի 1881 ամի։

Բարանովը գալիս է ինձ մօտ շատ քիչ, ինչպէս մի մոլորակ, միայն մի քանի րոպէով։ Երէկ ըստ սովորականին ես նստած էի տանը. Բոլոր եկեղեցիներում տեղի ունէր ս. Խաչի երեկոյեան ժամերգութիւնը։ Բայց ես ոյժ չունէի եկեղեցի գնալու։

Բարանովը հազիւ ոտների վերայ իրեն պահելով եկաւ. նշանակուելու օրից նա հանգիստ չունէր ոչ ցերեկը և ոչ գիշերը. նորա գլխաւոր աշխատանքը գիշերն է կատարուում։

«Է՛, ասաց նա, վաղը սարսափելի օր է լինելու։ Աստուած ի՛նչպէս պէտք է համբերէ։ Պատրաստուում է մահափորձ կայսեր և պրուսացիների թագաժառանգի կեանքի դէմ ճանապարհի վերայ չորս տեղ։ Մէկ տեղ նկատու վերայ պիտի հաւաքուին կառապանի զգեստներ հագած մարդիկ խաչաձև հրացանաձգութիւն բանալու համար։

Նա իւր ձեռքին ունէր այդ կատարուելիք գործողու-

Թեանց ամբողջ ծրագիրը:

Երէկ թաղաժառանգը Բերլինից ստացաւ գաղտնի հեռագիր այդ մասին, և նա այդ հեռագիրն ուղարկեց Բարանովին, սակայն վերջինս արդէն իւր ծրագիրն ունէր:

Մի մարդուց է կախուած, ասաց նա,—ամեն բան կատարուած է. բայց ո՞վ գիտէ, թէ դարձեալ ինչ կայ: Դուք չէիք քնի գիշերը, եթէ ես ձեզ այն ամենը պատմէի, ինչ որ բացուած է, թէ ի՞նչ են նոքա արեւ և պատրաստել. 48 մարդկանցից, որոնք պէտք է գործեն, այժմ 19 հոգի իմ ձեռքիս են: Գնում եմ այս րոպէիս ձերբակալելու: Թէ այս գիշեր էլի ի՞նչ կբացուի, անյայտ է»:

Երևակայեցէք խեղճ թագաւորի դուրսիւնը, որը պէտք է անպատճառ բերդ զնար, իմանալով, որ իրեն ամեն քայլափոխում մահ է սպառնում: Վի՛մ մասին ես անհանգիստ չեմ լինում,—ասաց նա Բարանովին.—անհանգիստ եմ միայն կայսրուհու և երեխաների համար»:

Չմերային պալատի առաջ Սալտիկովի դրան դիմացը Բարանովի կարգադրութեամբ մի անցք են փորում, այդ ժամանակ յաջողուեց նորան 17 մինայի լար կտրել:

«Եւ դուք չէք կարող երևակայել,—ասում է Բարանովը,—սկսած Ատլերբերգից, որքան մարդ ինձ արգելք է լինում ամեն մի քայլափոխում: Չէի կարող հօ ասել, թէ ես ի՞նչ գիտեմ և ինչո՞ւ եմ անում»:

Առաւօտեան նա ինձ հրաժեշտ տուեց, կարծէք վերջին անգամ, յոմենայն դէպս:

27 Ապրիլի: Գրում եմ Գառչինոյում,
զնացքին սպասելիս:

Ապրիլի 21-ին կանչեցին մեզ Գատչինո, կայսեր մօտ. այսինքն՝ ինձ, Լօրիսին, Աբաղային, Մելիւտինին, Նիկոլային, Ն. Ն. Նաբակովին. կայսրը բաց թողեց Վալուեին, Ուրուսովին. կամենում էր նաև Նաբակովին չհրաւիրել, բայց ես համազեցի նորան, որ արդարատուութեան նախա-

րարինն բաց թողնել չի կարելի, քանի որ նա իւր իրաւունքներին մէջ է:

Մենք գնացինք առաւօտեան ժամի 9-ին, միևնոյն վաղոնով: Բոլորն էլ նստած էին անկիւններում, իմ հակառակորդները ոչինչ չէին խօսում ինձ հետ, այլ միայն միմեանց հետ էին խօսում:

Ժողովը հրաւիրուած էր նորա համար, որ նախարարները բացատրէին կայսեր, թէ ինչ են կամենում անել, ինչ ոգով կառավարել և ինչ միջոցներ ձեռք առնել, Միքանի օրից ի վեր Լօրիսը պնդում էր, թէ անհրաժեշտ է, որ միմեանց հետ խօսենք այդ խնդրի առթիւ: Սակայն այդ խօսակցութիւնը տեղի չունեցաւ, այլ միայն Լօրիսը Արազայի հետ էր առանձին դաւադրութիւն կազմում:

Եկանք, ներս մտանք, կայսեր չորս կողմը նստեցինք: Նա դառնում էր իւրաքանչիւրին կարճ հարցերով և այդպիսով հերթով բոլորին էլ բացատրութեան էր հրաւիրում: Սկսեցին զանազան խօսակցութիւններ, որոնց մէջ միևնոյն երկդիմի գիծն էր նկատուում: Խօսեցին միութեան անհրաժեշտութեան համար, նաև բոլոր նախարարները կայսեր կատարեալ վստահութիւնը վայելելու համար: Լօրիսն ասաց, թէ զանազան մասերի նկատմամբ, որքան ժողովներ պիտի տեղի ունենան, և ի միջի այլոց մի յիմար դարձուածք էլ գործ ածեց, թէ քրիստոնէութիւնն էլ կատարելագործուում է, ևս առաւել պետական հաստատութիւնները պէտք է կատարելագործուեն: Արազան խօսեց շատ ճառամարան: Միլիտարներ այնքան տաքացաւ և ինքն իրան մոռացաւ, որ կականեց Պետերբուրգի լրագիրներին առաջնորդող յօդուածների ընդունելութիւնը, այսինքն, յայտնեց, որպէս թէ ամբողջ թշուառութեան պատճառն այն է, որ հանդուցեալ կայսեր բարեփոխումները կիսաճանապարհին կանգ առան:

Ամենից վերջը ինձ դարձաւ ևս յայտնեցի, որ ընդհանուր մտքով առած չի կարելի չհամաձայնել այն բանի հետ, ինչ որ ասացին միւսները միութեան, վստահութեան, խանդարուած շատ բաների կազմակերպելու

անհրաժեշտութեան համար, բայց պէտք է ներկայ լուսին
կարեւորութիւնն էլ աչքի առաջ ունենալ: Բոլորն սպա-
սում են և ձանձրացուցիչ անորոշութեան մէջ են գլտ-
նում: Սպասում են, որ կառավարութիւնը ցոյց տայ
իրեն վճռական գործունէութեամբ, որ ոչ մի կասկածանք
չի յարուցանիլ այն բանի նկատմամբ, թէ ինքն ինչ է
ցանկանում, և որը ոչ մի կերպ աչքից բաց չի թողնիլ:
Յետոյ ես խօսեցի Լօրիսի և Միլիտինի յայտնած մտքերի
վերաբերութեամբ և բոլորովին պարզեցի, որ քրիստոնէ-
ութեան հիմունքները յաւիտենական են, բայց կեանքի մէջ
նոցա ճշմարտապէս իրագործումը անսահման է և այս
տեսակէտից ներքին բարեփոխութիւնը կանգ չէ առնում:

Իմ այս խօսքերից Աբաղան վիրաւորուեց և սկսեց
ինձ շատ սուր կերպով հակաճառել: Բայց լարումը
պատճառ եղաւ, որ նա յիմարութիւններ ասաց, որոնց
հերքելը դժուար չէր ինձ համար: Այստեղ խօսեց N N
այն մտքով, որ սահմանադրութեան մասին խօսել և մտա-
ծելն աւելորդ է, սակայն պէտք է որ մի բան արուի, որ
ըստ երևութին էական կէտերում ամենքն համաձայն են,
անհամաձայնութիւնը միայն ոչ էական կէտերի մէջ է:

Հէնց որ սենեակից դուրս եկանք, կարծես հմայքն
աչքերիցս վայր ընկաւ: Նախարարների մէջ յանկարծ տաք
խօսակցութիւն սկսուեց: Աբաղան քիչ մնաց վզովս էր
փաթաթում, ճրքան ուրախ էր, որ թիւրիմացութիւնը
վերացաւ: Կարծէք տօնախմբութիւն էր: Գնացինք նախա-
ճաշելու, սկսեցինք անեկդոտներ ասել: Վերադարձին վա-
զոնում նախարարները նման էին *écoliers en vacance*.

Նոքա գնացին այնտեղ երկիւղի մէջ. թէ իրենց ար-
դեօք չեն դուրս անի, և վերադարձան աներեւակայելի
ուրախութեամբ, դեռ սկսեցին ասել, թէ փառաւոր յաղ-
թանակ տարան: Ո՞ւմ վերայ: Ի՞նչ թէ կայսեր: Խօսուում
էր թէ ես խայտառակուեցի և ինձ յաղթեցին:

Լօրիսը և Աբաղան այդ օրը ճաշեցին Հեղինէ Նիկո-
լանա Նելիդովի մօտ, կենացներ են խմել և շնորհաւորել
միմեանց: Երեկոյեան նմանապէս:

29 Ապրիլի:

Երէկ երեկոյեան մեզ հաւաքեցին Լօրիս-Մելիքովի մօտ խորհրդակցութեան, եկաւ նաև N N-ը. նաբակովն էլ եկաւ և յայտնեց մանիֆեստի մասին: Ինչպէս կայծակ, այդ լուրը նախարարներին զարմացրեց: Ոչ ոք բան չգիտէր:

Խորհրդակցութիւնից յետոյ, երբ N N-ը գնաց, Աբաղան յուզմունքի մէջ նորից խորհրդակցութիւնը բաց արեց: Ասում են ինչ որ մանիֆեստ կայ: Այս ինչ է նշանակում: Ո՞վ է գրել այդ: Ես յայտնեցի, որ գրել եմ՝ կայսեր հրամանով: Դրութիւնը փոխուեց: Ես զգում էի, որ ինձ անիծում են: Լօրիսը, յատկապէս Աբաղան, չկարողացան իրենց բարկութիւնը զսպել: Աբաղան դողգոջուն ձայնով ասաց, որ այդ վիրաւորանք է, որ այն համաձայնութիւնից (նա նոյն իսկ ասաց՝ կոնտրակտը) յետոյ, որ կայսրը տուեց նախարարներին, այդ անկարելի էր, որ չի կարող մնալ և ուրբաթ օրը արձակուրդ կ'իսնդրէ:

29 Ապրիլի, երեկոյեան:

Դրութիւնը շատ սուր կերպարանք առաւ: Աբաղան ինքնասիրութիւնից խելացնորուեց: Նա լուրջ կերպով երեւակայում էր, որպէս թէ կայսրը նորա հետ ինչ որ պայման է կապել (այս լուրը իրենք էին տարածել), և պէտք է հնազանդէ նորան ընտրող կառավարութեանը: Նա այժմ հարցն այսպէս է դնում՝ կամ նոքա կամ ես: Միանգամից կայսեր դրին տիկնիկի կամ յիմարի տեղ և կուրացած իրենց ինքնասիրութիւնից, այլ ևս ոչինչ չէին տեսնում: Ասիացի կատաղած Լօրիսը կարող է շատ վատ բաներ մտածել: Բայց ես զգում եմ, որ ճշմարտութիւնն ինձ հետ է: Ես ինձ համար չեմ հոգս անում, այլ Ռուսաստանի, կայսեր համար, որին ես սիրում եմ: Աւանդ, որքան քչերն են ճանաչում և սիրում նորան:

Պետերբուրգում լուր է տարածուել թէ նախարար-

բութեան ինչ որ միութիւն պէտք է լինի, որը պիտի կառավարէ Ռուսաստանը ձայների մեծամասնութեամբ, և Լօրիսը պիտի լինի պռաճին նախարարը: Սակայն կայսրն շատ ուղիղ զգացում ունի: Սկսեցի ես նորա համար մանիֆեստ գրել: Ես գիտեմ, որ նա ինքն էր այդ ուղում, ասել էր նախարարներին: Սակայն նորա ընդդիմախօսել էին թէ պէտք է սպասել:

Երեք օր առաջ վերջացրի և շատ դո՛ւ մնացի: Կինս նմանապէս Իւրաքանչիւր խօսքը կշռեցի: Երէկ ուղարկեցի նորան մի բացատրիչ նամակով, որ ոչ ոքից խորհուրդ չհաղցնէ և զօրահանդէսի օրը մանիֆեստը Պետերբուրգում հրատարակէ:

Գիշերուայ ժամը երեքին բերում են հեռագիր: Կայսրը գրում է, որ միտնդամայն դո՛ւ է ծրագրով և ժամի երկուսին հրաւիրում էր իւր մօտ:

Այսօր Գէորգի Ալէքսանդրովիչի ծննդեան օրն է: Ես հասայ նոյն իսկ պատարագին և նախաճաշից յետոյ համարեա մէկ ու կէս ժամ մնացի կայսեր մօտ: Նա շատ դո՛ւ էր, մի քանի անգամ կարգաց, և կայսրուհու հետ միասին, կարծէք, ուրախացաւ ծանր դրութիւնից դուրս գալուն համար: «Ի՞նչ արած, ասաց նա, ես մի քանի անգամ ասացի նոցա, բայց նորա բոլորն առում էին, որ հարկաւոր չէ»: Նա չէր կամենում նոցա հետ խորհրդակցել: Նորա համար հաճելի էր մտածելը, թէ նոցա համար ի՞նչպիսի սիւրպրիզ պիտի լինի: «Ահա—ասաց նա, իսկ այս րոպերը՝ նորանց բոլորովին չի դուր գալ, որտեղ ասած է «հաւատալով ճշմարտութեան և ինքնակալութեան ուժին»: Միւս օրը նա կամենում էր մանիֆեստը ուղարկել նաբակովին տպելու համար և ապրիլի 29-ին, զօրահանդէսի օրը, հրատարակել, հէնց որ նա կգայ Պետերբուրգ:

1 Մայիսի:


Մանիֆեստը առաջ բերեց կատարեալ coup d'etat: Երեք օր առաջ Լօրիսը հիւանդութեան պատճառով

Հրաժարական ներկայացրեց, կայսրը գրեց, «ես սպասում էի սորան, սակայն ծանր է ինձ մտածել, որ այդ կատարուում է մանիֆեստի հրատարակման օրը», երէկ կայսրը կանչեց Իգնատեին Թուում է թէ նա կլինի յաջորդը:

Այսօր Աբաղան ևս ինքը չգնաց զեկուցանելու, այլ արձակուրդի համար խնդիր տուեց: Կայսրը այդ ևս ընդունեց շատ ուր նկատողութեամբ:

Աբաղան բոլորովին շփոթուել է: Սպրիլի 21-ի նիստից յետոյ նա արուեստական կերպով բարձրացրեց բորսայի կուրսը, և յետոյ ցոյց էր տալիս, թէ նիստի պատճառով ինչպէս էին արժէթղթերը բարձրանում: Այն ժամանակ նա արտասահման հեռագիրներ է ուղարկել թէ՛ «ազատամիտ կուռակցութիւնը յաղթութիւն տարաւ», այժմ, մանիֆեստի հրատարակումից յետոյ, նա մուրհակազեղ զանձարանի (Учетный Банк) միջոցով դարձեալ արուեստական կերպով բորսայում արժէթղթերի գները ձգեց:

Թարգմ. Արսակ վարդապետ.



ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐ

I.

ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

(Նրա մահուան առթիւ)

Ա.

Ս. Էջմիածնում տեսայ ես նրան վերջին անգամը՝ ծերացած, դեղնած երեսով, մարուող աչքերով: Նա հազիւ էր կանգնում ոտի վերայ, հազիւ էր արտասանում բառերը: